ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԿԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1950—1956)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՉԻՆՅԱՆ

1950—1956 թթ. հանրապետության ժողովրդական տնտեսության առջև դրված էին մեծ խնդիրներ։ ՍՄԿԿ XIX համագումարը, եթե միութենական մասշտաբով նախատեսել էր արդյունաբերական արտադրանքի 70% աճ, ապա Հայաստանում՝ 100%։ Ընդ որում, շեշտը դրվել էր հանրապետությունում մետալուրգիական, քիմիական և էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացման վրա։ Այդ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ էր արտադրության կատարելագործմանը զուգընթաց աշխատավորների շրջանում լայնորեն ծավալել սոցիալիստական մրցություն, խրախուսել նրանց ստեղծագործական ակտիվությունը։

1950-ական թվականներին ինչպես ՀԿԿ Կենտկոմը, այնպես էլ հանրապետության կուսակցական կազմակերպությունները, քննադատաբար վերլուծելով եղած թերությունները, զգալի աշխատանք կատարեցին աշխատավորների շրջանում սոցմրցության ծավալման ուղղությամբ։ Սոցիալիստական մրցության ծավալումը կարևոր դեր էր խաղում նաև աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործում։ Վ. Ի. Լենինը գրում էր, որ այն իրական հնարավորություն է ստեղծում «աշխատավորների մեծամասնությանը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդները, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճզմել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[1]։

ՀԿԿ Կենտկոմը և կուսակցական կազմակերպություններն աշխատանք ծավալեցին սոցմրցության գործում տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ։ Այսպես, 1950 թ. մայիսի 9-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն, իսկ հոկտեմբերի 30-ին պլենումն անդրադարձան Գյումուշգէսի շինարարության ընթացքին։ Պարզվեց, որ շինարարությունում աշխատողների միայն 75%-ն էր ընդգրկվել սոցմրցության մեջ, նրա ղեկավարման գործում առկա էր ձևամոլություն։ ՀԿԿ Կենտկոմը Հիդրոէլեկտրակայանի շինարարության կուսակազմակերպությանը պարտավորեցրեց գործնական աշխատանք կատարել սոցմրցության և նորարարության զարգացման ուղղությամբ՝ նյանում ընդգրկելով ամբողջ աշխատավորությանը[2]։ 1952 թ. հունիսի 30-ին, ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Ղափանի շրջկոմի հաշվետվությունը, նշեց, որ թեև շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատավորների մեծ մասն ընդգրկվել է սոցմրցության մեջ, բայց տեղի կուսակազմակերպություններն անհրաժեշտ աշխատանք չեն կատարել սոցմրցության առաջավորներին խրախուսելու և նրանց փորձը տարածելու ուղղությամբ։ Շրջանի կուսակազմակերպությունների առջև խնդիր դրվեց սոցմրցության կուսակցական ղեկավարման մակարդակի բարձրացման և կազմակերպական-քաղաքական աշ-

---

1 *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 229։*

2 *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 84, գ. 11, թ. 133—134։*

խատանքի նոր ձևերի ու մեթոդների կիրառման շնորհիվ ապահովել աշխատավորության ներգրավումը սոցմրցության մեջ, խրախուսել արտադրության առաջավորներին, տարածել աշխատանքի առաջավոր փորձը[3]։

Կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների նպատակասլաց աշխատանքի շնորհիվ հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում լայն մրցություն ծավալվեց։ Մրցության ավանգարդում էին Երևանի, Լենինականի, Կիրովականի և Ալավերդու աշխատավորները։ Սոցմրցության լայն մասսայականության ապահովման շնորհիվ Երևանի Լենինյան շրջանի աշխատավորները 1950 թ. համեմատ 1951 թ. համախառն արտադրանքն ավելացրին 15,4%-ով և պլանից դուրս թողարկեցին 50 մլն ռ. արտադրանք։ Սոցմրցության լայն ծավալման շնորհիվ մայրաքաղաքի աշխատավորները դեկտեմբերի 12-ին կատարեցին 1951 թ. պլանային առաջադրանքները և նախորդ տարվա համեմատությամբ աշխատանքի արտադրողականությունը բարձրացրին 6,5, արտադրանքի ինքնարժեքն իջեցրին 8,1, իսկ պլանային առաջադրանքները գերակատարեցին 6,1%-ով[4]։ Դրա շնորհիվ 11 ձեռնարկություններ համամիութենական սոցմրցության մեջ շահեցին առաջին, երկրորդ և երրորդ տեղերը։

1951 թ. սոցմրցությունը լայն զարգացում էր ստացել գունավոր մետալուրգիայի ձեռնարկություններում։ Այսպես, Քանաքեռի ալյումինի գործարանում այդ մրցության մեջ էր ընդգրկվել աշխատավորների 100%-ը, Ալավերդու պղնձաքիմիական գործարանում՝ 99, Զանգեզուրի հանքավարչությունում՝ 98, Ալավերդու լեռնահանքերում՝ 100, Ախթալայի հանքերում՝ 90,1, շինմոնտաժային վարչություններում՝ 98%-ը[5]։

Սոցմրցության ղեկավարման ուղղությամբ դրական էր ՀԿԿ Թումանյանի շրջկոմի աշխատանքը։ Շրջկոմի բյուրոն 1951 թ. լսեց սոցմրցության և նորարարության զարգացման ոլորտում պղնձաքիմիական գործարանի կուսբյուրոյի գործունեության, սոցմրցության և նորարարության նկատմամբ կուսակցական ղեկավարության ուժեղացման վերաբերյալ հարցերը և մշակեց համապատասխան միջոցառումներ։ Կուսակցության շրջկոմի գործնական օգնության և սոցմրցության ծավալման շնորհիվ գործարանի կոլեկտիվը 1951 թ. տարեկան համախառն արտադրանքի պլանը կատարեց 110,2%-ով, ինքնարժեքն իջեցրեց 8,6%-ով, տվեց մի քանի միլիոն ռուբլու արտապլանային արտադրանք։ Սոցիալիստական մրցությունն այդ տարիներին լայնորեն տարածվել էր հանրապետության արտադրական բոլոր օղակներում, յուրաքանչյուր աշխատատեղում։ Այսպես, Երևանի մուլիտի գործարանում սոցմրցության կազմակերպման գործում առկա էին թերություններ։ 1951 թ. ՀԿԿ Օրջոնիկիձեի շրջկոմի բյուրոն քննարկեց գործարանում աշխատանքի կազմակերպման, արտադրողականության բարձրացման ու սոցմրցության ծավալման հարցը և գործարանի կուսակցական, արհմիութենական կազմակերպություններին ու ադմինիստրացիային գործնական հանձնարարականներ տվեց։ Վերլուծելով շրջկոմի բյուրոյի որոշումը, գործարանի գիտամեթոդական խորհուրդը մշակեց միջոցառումների հստակ ծրագիր, որի կենսագործման նպատակով ծավալվեց քաղաքական-մասսայական լայն աշխատանք։ Գործարանի կուսբյուրոն բոլոր բրիգադներին և օղակներին համապատասխան ցուցումներ տվեց, հաճախակի լսում էր կատարած աշխատանքի մասին նրանց ինֆորմացիան։ Կնքվեցին միջբրիգադային և անհատական մրցության պայմանագրեր, ետ մնացողներին ամրացվեցին առաջավորները։ Շուտով նկատելի դարձան սոցմրցության արդյունքները. գործարանը փակեց ճեղքվածքը և տարեկան պլանը կատարեց

---

3 Նույն տեղում, գ. 79, թ. 196։

4 Նույն տեղում, գ. 64, թ. 45։

5 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 902, ց. 1, գ. 2, թ. 39։

ժամկետից շուտ[6]։ Նման օրինակները բազմաթիվ են։ Հայաստանի կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների նպատակասլաց գործունեության շնորհիվ 1951 թ. հանրապետության աշխատավորների 93%-ն ընդգրկվել էր սոցմրցության մեջ, և պատահական չէ, որ արդյունաբերական արտադրության պլանային առաջադրանքը կատարվեց 104,4, աշխատանքի արտադրողականությանը՝ 108%-ով. ապրանքային ինքնարժեքն իջավ 7,8%-ով[7]։

Սոցմրցությունը միաժամանակ աշխատավորական կոլեկտիվների ինտերնացիոնալ կապերի ամրապնդման կարևոր աղդակ էր։ Մրցության մեջ էին Լենինականի, Կիրովաբադի, Քութայիսի և Գորիի տեքստիլագործներն ու բամբակագործները, Սանահինի և Գուրջիանի երկաթուղայինները, Երևանի Զերժինսկու և Թբիլիսիի Կիրովի անվան հաստոցաշինական գործարանների, Շամլուղի և Դաշքենդի հանքավարչությունների կոլեկտիվները։ Ալավերդու պղնձաքիմիական գործարանի և Թումանյանի հրակայուն նյութերի գործարանի կոլեկտիվները 1951 թ. սոցմրցության մեջ էին եղբայրական Վրաստանի Զեստաֆոնի համաձուլվածքների և Ռուսթավի մետալուրգիական գործարանների կոլեկտիվների հետ[8], մրցություն, որը մինչև այժմ շարունակվում է։

1952 թ. արդյունաբերական ձեռնարկություններում սոցմրցությանը զուգընթաց պայքար ծավալվեց տեխնիկական առաջադիմության համար, առանց որի անհնար էր լուծել էկոնոմիկայի զարգացման խնդիրները։ Ձեռք առնված կոնկրետ միջոցառումների շնորհիվ ակտիվացավ ձեռնարկությունների գիտատեխնիկական խորհուրդների և կոնստրուկտորական բյուրոների գործունեությունը, նկատելի աշխատանք կատարվեց արտադրության առաջավորների, գյուտարարների և նորարարների աշխատանքի խրախուսման ուղղությամբ։ 1952 թ. մայիսի 12-ին հանրապետությունում սոցմրցություն ծավալելու կոչով հանդես եկավ Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան կոմբինատի կոլեկտիվը։ Նրա օրինակով սոցմրցության մեջ մտան գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների աշխատավորների 98,2%-ը, որի 69,9%-ը կազմում էին ստախանովականներն ու առաջավոր բանվորները։ Նկատելի հաջողություններ էին հասել նաև մյուս մինիստրությունների արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները։ Այդ գործում դրական էր Երևանի ավտոդետալ, կաբելի, պոլիվինիլացետատ, հացի № 4 գործարանների կոլեկտիվների աշխատանքը։ Հանրապետության պետպլանի 1952 թ. զեկուցագրում նշված է. «Սոցիալիստական մրցության լայն ծավալման շնորհիվ մեր հանրապետության աշխատավորները 1952 թ. տնտեսական տարում նշանակալի հաջողությունների հասան ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում»[9]։ Այսպես, օրինակ, հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները պլանային առաջադրանքները կատարեցին 101,5%-ով, 1950 թ. համեմատ տալով արտադրանքի 25% աճ. այդ թվում մետալուրգիական արտադրանքն աճել էր 32, քիմիականը՝ 34, մեքենաշինականը՝ 46, շինարարական իրերինը՝ 35%-ով[10]։

1953 թ. լայնորեն սոցմրցություն ծավալվեց տեքստիլ արդյունաբերության ձեռնարկություններում։ Այսպես, Լենինականի տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների 1200 աշխատողներ, որոնցից 282-ը կոմունիստներ էին, ժամկետից շուտ կատարեցին 10 ամսվա պլանային առաջադրանքներն ու սոցպարտավորությունները։ Այդպիսի ցուցանիշներ ապահովեցին նաև այլ մինիստրությունների ձեռնարկությունները։ Երևանի Զերժինսկու անվան հաստոցաշինական, Կիրովի անվան և էլեկտրամեքենաշինա-

6 «Կուսակցական կյանք», 1952, № 2, էջ 57։

7 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 84, գ. 64, թ. 45։

8 «Коммунист», 19. IX. 1952.

9 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 130, ց. 5, գ. 395, թ. 42։

10 Նույն տեղում, թ. 1։

կան գործարաններում սոցմրցության առաջավորների պարգևատրվածների թիվը նախկինի համեմատությամբ եռապատկվեց[11]։ Դրական էր նաև Երևանի կաբելի, ավտոդետալ, ավտոդողերի, Թումանյանի հրակայուն նյութերի գործարանների, Երևանի ծխախոտի և Լենինականի մանվածքային ֆաբրիկաների աշխատանքը։ Սակայն 1953 թ. ամբողջովին վերցրած արդյունաբերական ձեռնարկությունները չկատարեցին պլանային առաջադրանքները։ Առանձնապես ետ էին մնում արդյունաբերական շինարարության (93,2%), անտառարդտնտեսության (82,5%), պարենային ապրանքների արտադրության (93,9%) ձեռնարկությունները[12]։ Արտադրական պլանների թերակատարումը մասնավորապես հետևանք էր այն բանի, որ ոչ բոլոր ձեռնարկություններում էր պահանջվող մակարդակով կազմակերպվում աշխատավորների սոցմրցության ու նորարարության զարգացումը, արտադրության տեխնիկատնտեսական ղեկավարումը։

Հիշյալ թերությունները վերացնելու նպատակով ՀԿԿ XXVII համագումարը (1954 թ.) խնդիր դրեց սոցմրցություն ծավալել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու, վառելիքաէներգետիկ ռեսուրսները խնայելու և արտադրության մեջ առաջավոր փորձը արմատավորելու նպատակով[13]։ Ձեռնարկված համապատասխան միջոցառումների շնորհիվ արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները գերակատարեցին 1954 թ. պլանային առաջադրանքները, իսկ բազմաթիվ աշխատողներ ժամկետից շուտ՝ նոյեմբերի 10-ին, կատարեցին տարեկան պլանները[14]։

1954 թ. նորարարական շարժումն առանձնապես մեծ զարգացում ապրեց դունավոր մետալուրգիայի ձեռնարկություններում։ 1953 թ. համեմատությամբ 1954 թ. դրանից ստացված շահույթը կրկնապատկվեց և կազմեց 1 մլն 520 հազ. ռ.։ Նորարարական առաջարկների ներդրումն ըստ ճյուղի ձեռնարկությունների հետևյալ պատկերն ուներ[15].

Ձեռնարկություններ	Ընդունված նորարարություն	Ներդրված նորարարություն	%-ը
Քանաքեռի ալյումինի գործարան	183	121	61,8
Ալավերդու պղնձաքիմիական գործարան	165	125	75,6
Զանգեզուրի հանքվարչություն	35	30	85,4
Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ	20	20	100
այլ ձեռնարկություններ	36	24	66,6
ընդամենը՝	439	320	73,8

5-րդ հնգամյակի ավարտական տարում ևս հանրապետության կուսակազմակերպությունները կարևոր ուշադրություն էին դարձնում գիտատեխնիկական հեղափոխության նվաճումներն արտադրության մեջ ներդնելուն, զարգացնում արտադրության կատարելագործմանն ուղղված գյուտարարական և նորարարական շարժումը։ Զգալի էր Լենինյան շրջանի աշխատավորների ավանդը։ 1955 թ. նրանց կատարած առաջարկներից արտադրության մեջ ներդրվեց 260-ը, որը տվեց 10 մլն. ռ. տնտեսական օգուտ[16]։ Շրջանի պոլի-

11 «Սովետական Հայաստան», 19. I. 1952։

12 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 130, ց. 5, գ. 337, թ. 8։

13 Ս. Թովմասյան, Հաշվետու զեկուցում ՀԿԿ XVII համագումարին՝ ՀԿԿ Կենտկոմի աշխատանքի մասին, Երևան, 1954, էջ 29։

14 «Սովետական Հայաստան», 13. XI. 1954։

15 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 902, ց. 1, գ. 26, թ. 140։

16 «Կուսակցական կյանք», 1956, № 10, էջ 34։

վինիլացետատ գործարանի արտադրատեխնիկական խորհուրդը որպես կանոն քննարկում էր նորարարական և գյուտարարական շարժման ծավալման, նրա հետագա կատարելագործման հարցը, համագործակցում գիտահետազոտական ինստիտուտների հետ։ Այսպես, նրա նախաձեռնությամբ կատարելագործվեց քացախաթթվի և վինիլացետատի արտադրության տեխնոլոգիան, որի շնորհիվ տարեկան տնտեսվեցին 7 մլն. ռ. արժողությամբ նյութեր։ Նորարարական շարժմանն ավելի լայն բնույթ էր հաղորդում աշխատանքի առաջավոր փորձի մասսայականացումը։ «Օրինակի ուժը,— գրել է Վ. Ի. Լենինը,— որը չկարողացավ իրեն դրսևորել կապիտալիստական հասարակության մեջ, վիթխարի նշանակություն կստանա հողի և գործարանների մասնավոր սեփականությունը վերացրած հասարակության մեջ ոչ միայն այն պատճառով, որ այստեղ թերևս հետևելու են լավ օրինակին, այլև այն պատճառով, որ արտադրության կազմակերպման լավագույն օրինակը զուգորդվելու է աշխատանքի անխուսափելի թեթևացման և սպառման գումարի մեծացման հետ նրանց համար, ովքեր կիրառել են այդ լավագույն կազմակերպումը»[17]։

Կուսկազմակերպությունների նպատակասլաց քաղմասսայական աշխատանքի շնորհիվ էր, որ հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները հնգամյա պլանը կատարեցին ժամկետից շուտ, պլանից ավելի թողարկեցին 186 մլն. ռ. արտադրանք[18]։ Միայն տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունները պլանային առաջադրանքը կատարեցին 102,2%-ով և պլանից ավելի թողարկեցին 12,5 մլն. ռ. արտադրանք[19]։ Էական նվաճումներ ձեռք բերեցին մասնավորապես գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների կոլեկտիվները։ Ալավերդու պղնձաքիմիական գործարանի կուսկոմիտեն հաճախակի էր կազմակերպում արտադրության առաջավորների, վարպետ-դաստիարակների և նորարարների հավաքներ, ստեղծել էր առաջավոր փորձի դպրոց։ 1955 թ. կոլեկտիվում աշխատում էին 200 նորարարներ և գյուտարարներ։ Կուսկազմակերպությունը մասսայականացրեց նորարարներ Ս. Սոխիկյանի, Մ. Բոյաջյանի, Ս. Աբգարյանի, Ս. Մաթևոսյանի, Վ. Զարապովի, Մ. Հայրապետյանի աշխատանքի փորձը։ 1956 թ. ապրիլին գործարանում կազմակերպված նորարարների հավաքում խնդիր դրվեց ավելի լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը և նորարարական շարժումը։ Այդ նպատակով նույն թվականի սեպտեմբերի 9-ին կազմակերպվեց գիտագործնական կոնֆերանս։ Քաղաքական-մասսայական աշխատանքի, ցուցադրական ագիտացիայի միջոցով լայն մրցություն ծավալվեց գործարանի լավագույն նորարարական կոլեկտիվի, լավագույն նորարարի կոչմանը արժանանալու համար։ Գլխավոր ինժեների ղեկավարությամբ ստեղծվեց սոցմրցությունն ամփոփող համագործարանային հանձնաժողով։ Արտադրամասերում ստեղծված 12 այդպիսի հանձնաժողովները կոորդինացնում էին այդ աշխատանքը։ Սոցմրցության ծավալման կապակցությամբ կոլեկտիվում տեղի ունեցան ավելի քան 18 ժողովներ, որոնց մասնակցեցին 1110 աշխատավորներ։ 1955 թ. համեմատ 1956 թ. կոլեկտիվում զգալիորեն ավելացավ նորարարական առաջարկների թիվը։ Կատարված 790 առաջարկներից 434-ի ներդրումը տվեց 519,8 հազ. ռ. օգուտ[20]։ Ձեռք բերած բարձր ցուցանիշների շնորհիվ գործարանն արժանացավ համամիութենական մրցանակի։

Նորարարական շարժումը լայն թափ էր ստացել Քանաքեռի ալյումինի գործարանում։ 1956 թ. այստեղ աշխատում էին 180 նորարարներ, որոնցից 135-ը բանվորներ էին։ Գործարկումը 1956 թ. կազմակերպեց տեխնիկական

---

17 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 185—186.

18 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 130, ց. 5, գ. 382, թ. 1։

19 «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, с. 47, 49.

20 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 902, ց. 1, գ. 46, թ. 3։

կոնֆերանս՝ «նորարարական առաջարկությունների ներդրման վիճակը և նոր տեխնիկայի արմատավորումը» թեմայով։ Լուրջ ուշադրություն էր դարձվում նորարարական շարժման ծավալմանը։ Գործարհկոմը 1956 թ. երեք անգամ նրա զարգացման վերաբերյալ հարց լսեց, մշակեց համապատասխան միջոցառումներ և մասսայականացրեց նորարարներ Օ. Սինանյանի և Յու. Հարությունյանի աշխատանքի փորձը։ Այդ աշխատանքի շնորհիվ 1956 թ. ստացվեց 191 հազ. ռ. օգուտ։ Գործարանի կոլեկտիվը դարձավ գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների սոցմրցության հաղթող[21]։ Դրական աշխատանք էր կատարվում նաև տեղական արդյունաբերության մինիստրության ձեռնարկություններում։ Այդ համակարգում աշխատում էին 646 նորարարներ, որոնց կատարած առաջարկները 1955 թ. տվեցին 3 մլն. 250 հազ. ռ. օգուտ։

Էլեկտրաարդյունաբերական ձեռնարկություններում նորարարական առաջարկություններից ստացված օգուտը կազմեց 5 մլն. ռ.[22], իսկ թեթև արդյունաբերության ձեռնարկություններում՝ 7 մլն. 359 հազ. ռ.[23]։ 5-րդ հնգամյակի տարիներին և 1956 թ. աշխատավորների սոցմրցության և նորարարության ծավալման շնորհիվ զգալիորեն բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, և պատահական չէր, որ արդյունաբերական արտադրանքի աճի ավելի քան $^2/_3$-ը ձեռք բերվեց դրա շնորհիվ[24]։ Աշխատանքի արտադրողականությունը 1950—1956 թթ. հանրապետության արդյունաբերության մեջ աճեց 33%-ով[25]։

Քննվող ժամանակաշրջանում Հայաստանի կոմկուսը կարևոր տեղ էր հատկացնում սոցմրցության ծավալմանը նաև գյուղատնտեսության բնագավառում։ Սակայն պետք է նկատել, որ հանրապետությունում թե՛ գյուղատնտեսության զարգացման և թե նրա պլանավորման գործում այդ տարիներին առկա էին մի շարք թերություններ։ Այսպես, հացահատիկի միջին բերքատվությունը 1950 թ. մեկ հեկտարից կազմում էր 6 ցենտներ, բայց ոչ ռեալ ձևով պլանավորվել էր այն 1955 թ. հասցնել 20—22 ցենտների։ Եվ պատահական չէ, որ 1955 թ. մեկ հեկտարից ստացվեց միայն 8,1 ցենտներ հացահատիկի բերք[26]։

Գյուղատնտեսության պլանավորման գործում առկա թերությունների հետ մեկտեղ կուսակցության շատ շրջկոմներ և սկզբնական կազմակերպություններ (Սիսիան, Սևան, Դիլիջան, Գուգարք, Աշտարակ, Ազիզբեկով) բավարար աշխատանք չէին կատարում սոցմրցության ծավալման և աշխատանքի առաջավոր փորձի մասսայականացման ուղղությամբ[27]։ 1952 թ. մայիսի 20-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն նշեց, որ ՀԿԿ Գուգարքի շրջկոմը բավարար ուշադրություն չէր դարձրել սոցմրցության ծավալմանը, որի պատճառով շրջանի 10 կոլտնտեսություններ տարիներ շարունակ չէին կատարում պլանային առաջադրանքները[28]։ Միաժամանակ, հանրապետությունում բարձր հիմքերի վրա չէր դրված մեքենատրակտորային կայանների աշխատանքը։ Թեև 1950 թ. համեմատությամբ 1952 թ. նրանց տեխնիկական զինվածությունը զգալիորեն աճել էր (50%-ով ավելացել էր տրակտորների և 70%-ով կոմբայնների թիվը)[29], սակայն դեռևս չէր ապահովվել գյուղատնտեսության կոմպլեքսային մեխանիզացումը։ 1952 թ. հանրապետությունում միայն 10 մեքենատրակտորային կայաններ կատարեցին պլանային առաջադրանքները։

---

21 Նույն տեղում, թ. 10։

22 Նույն տեղում, ֆ. 65, ց. 15, գ. 39, թ. 74։

23 «Կուսակցական կյանք», 1957, № 8, էջ 32։

24 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 65, ց. 15, գ. 39, թ. 76։

25 «Народное хозяйство АрмССР», Ереван, 1957, с. 84—85.

26 Նույն տեղում, էջ 85։

27 «Սովետական Հայաստան», 24. VIII. 1950։

28 Մի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 84, գ. 95, թ. 146։

29 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 130, ց. 5, գ. 395, թ. 9։

ՀԿԿ Կենտկոմի հուլիսյան (1952 թ.) պլենումը քննադատեց Թումանյանի, Էջմիածնի, Գորիսի, Կալինինոյի և Ղափանի մեքենատրակտորային կոլեկտիվներին, որոնցում լիարժեք աշխատանք չէր կատարվում սոցմրցության ծավալման ուղղությամբ։ Այսպես, Էջմիածնի մեքենատրակտորային կայանի տրակտորիստներ Գրիգորյանը և Մնացականյանը մշտապես գերակատարում էին պլանային առաջադրանքները, բայց նրանց օրինակով սոցմրցություն չէր ծավալվում, որի պատճառով տրակտորիստներ Բաղալյանը, Ավդալյանը և Ղարիբյանը պլանային առաջադրանքները կատարում էին 40—50%-ով[30]։

ՀԿԿ Կենտկոմը և հանրապետության կուսակցական կազմակերպությունները, բացահայտելով գյուղի աշխատավորության սոցմրցության գործում տեղ գտած թերությունները, հետևողական աշխատանք ծավալեցին այն վերացնելու և աշխատավորների ստեղծագործական ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ։ Դրա շնորհիվ հանրապետության գյուղատնտեսության առանձին ճյուղերում ձեռք բերվեցին կարևոր արդյունքներ։ ՀԿԿ Կենտկոմն ըստ գյուղատնտեսության ճյուղերի կազմակերպում էր աշխատավորների հավաքներ, որտեղ գործնական միջոցառումներ էին մշակվում ճյուղի հետագա զարգացման նպատակով։ Այսպես, 1951 թ. գարնանը կազմակերպվեց բամբակացան շրջանների աշխատավորների հավաք, որտեղ քննարկվեցին ինչպես 1951 թ. անելիքները, այնպես էլ հարևան հանրապետությունների աշխատավորական կոլեկտիվների հետ սոցմրցության կազմակերպման խնդիրները։ Դրա շնորհիվ լայնորեն ծավալվում էր առանձին հանրապետությունների, շրջանների և տնտեսությունների աշխատավորների մրցությունը։

1951 թ. Անդրկովկասի հանրապետությունների գյուղատնտեսության աշխատողները ևս հարևան հանրապետությունների շրջանների աշխատավորների հետ կնքեցին սոցմրցության պայմանագրեր։ Մրցությունը հատկապես գործարար բնույթ էր կրում Հայկական ՍՍՀ Արտաշատի, Իջևանի, Հոկտեմբերյանի, Ադրբեջանական ՍՍՀ Նախիջևանի, Ղազախի, Ադստաֆայի և Վրացական ՍՍՀ Ախալքալաքի, Մախարաձեի ու այլ շրջանների աշխատավորների միջև։ Սոցմրցության ղեկավարումը հստակորեն էր կազմակերպում ՀԿԿ Հոկտեմբերյանի շրջկոմը։ Շրջկոմի բյուրոն և սկզբնական կազմակերպությունները հաճախակի լսում էին սոցմրցությամբ պարտավորություններ ստանձնած կոլեկտիվների հաշվետվությունը, մասսայականացնում առաջավոր փորձը։ Օրինակափ էր, որ հանրապետությունում 1951 թ. սոցմրցության առաջավորներ էին շրջանի Մրգաշատի և Գետաշենի կոլտնտեսությունները, որոնք մրցում էին Ադստաֆայի շրջանի Կիրովի և մի շարք այլ կոլտնտեսությունների հետ։ Մրցակիցները հաճախակի էին կազմակերպում փոխայցելություններ, մասսայականացնում առաջավոր փորձը։ Դրա շնորհիվ Մրգաշատի կոլտնտեսությունը եթե 1949 թ. մեկ հեկտարից ստացել էր 17 ցենտներ ցորենի բերք, ապա հաջորդ տարի ստացավ ավելի բարձր բերք և կայուն պայմաններ ստեղծեց հետագա առաջընթացի համար[31]։ 1951 թ. Կամոյի շրջկոմի բյուրոն մասսայականացրեց Կաղմիր Գյուղի, Հացառատի, Բատիկյանի և Նորադուզի կոլտնտեսությունների առաջավոր փորձը, իսկ գյուղատնտեսության մինիստրությունը՝ Ղարիբջանյանի մեքենատրակտորային կայանի կոմբայնավար Ա. Պողոսյանի փորձը[32]։ Առաջավոր փորձի մասսայականացման ուղղությամբ հետևողական աշխատանք էր կատարում նաև Սպիտակի, Թալինի, Արտաշատի, Աշտարակի և այլ շրջաններում։ Աշխատավորական կոլեկտիվում մեծ հեղինակություն վայելողների փորձի մասսայականացումը և լավ աշխատանքի խրախուսումը կարևոր խթան էր սոցմրցության ծավալման համար։

---

30 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 84, գ. 79, թ. 20։

31 «Կուսակցական կյանք», 1951, № 2, էջ 46։

32 «Коммунист», 17. VII. 1954.

Թալինի մեքենատրակտորային բրիգադի բրիգադավար Ա. Նիկոյանն ակտիվորեն մասնակցում էր քաղաքական-մասսայական աշխատանքին և սոցմրցության առաջավոր էր։ 1951 թ. նա «Ստալինեց—6» տրակտորով 21 օրում 640 հա տարածությունից հավաքեց 12100 ցենտներ ցորենի բերք և պլանային առաջադրանքը կատարեց 130%-ով[33]։ Նման օրինակները բազմաթիվ են։ Դրանք խոսում են 1950-ական թվականներին գյուղում ծավալված քաղաքական աշխատանքի արդյունավետության և աշխատանքի նկատմամբ կոմունիստական շարժման արմատավորման մասին։ Հայրենանվեր աշխատանքի համար Ղարիբջանյանի մեքենատրակտորային կայանի կոմբայնավարներ Ն. Հարությունյանը, Պ. Բաղդասարյանը, Ք. Քերոբյանը, Թալինի մեքենատրակտորային կայանի բրիգադավար Ա. Նիկոյանը, տրակտորիստ Ա. Այվազյանը, Ագիզբեկովի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսության բրիգադավար Թ. Դավթյանը, Շամշադինի շրջանի Արծվաբերդ գյուղի կոլտնտեսության օղակավար Ս. Զարգարյանը և ուրիշներ 1952 թ. արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման։ 1952 թ. մարտին ՀԿԿ Կենտկոմի պլենումը, քննարկելով «Մեքենատրակտորային և մեքենա-անասնապահական կայանների գործունեությունն ագրոզոոտեխնիկական միջոցառումների իրականացման ուղղությամբ» հարցը, կուսկազմակերպություններից պահանջեց կատարելագործել սոցմրցության կազմակերպումն ու ղեկավարումը, նրա կենսագործմանը նպատակամղել քաղաքական-մասսայական աշխատանքը։ ՀԿԿ Կենտկոմի հիշյալ պլենումի որոշման կենսագործման նպատակով Ղարիբջանյանի և Ախուրյանի մեքենատրակտորային կայանների կոլեկտիվները գործարար մրցություն ծավալեցին։ Նրանք կնքեցին 12 բրիգադային և 127 անհատական մրցության պայմանագրեր։ Ագիտատորները և դասախոսները մշտապես լինում էին աշխատատեղերում, պարզաբանում օրվա անելիքները, տպագրում իլլիչովկաներ, խրախուսում առաջավոր փորձ։ Սոցմրցության լայն ծավալման շնորհիվ Ղարիբջանյանի մեքենատրակտորային կայանի կոլեկտիվը տարեկան պլանները կատարեց 124,3, իսկ Ախուրյանի մեքենատրակտորային կայանը՝ 111,7%-ով։ Սոցմրցության ծավալման շնորհիվ դրական արդյունքի հասան նաև Ամասիայի, Նոյեմբերյանի, Ալավերդի, Հոկտեմբերյանի և Վարդենիսի մեքենատրակտորային կայանների կոլեկտիվները[34]։ 1951—1952 թթ. հանրապետության գյուղի աշխատավորների սոցմրցության առջևից ընթանում էին Արտաշատի խաղողագործները։ Շահումյանի անասնապահները, Ագիզբեկովի ծխախոտագործները և Ախուրյանի ճակնդեղագործները, որոնք 1952 թ. մայիս—հունիս ամիսներին հանրապետության գյուղատնտեսության աշխատողներին սոցմրցության կոչ արեցին։ Արտաշատցիները պարտավորվեցին մեկ հեկտարից ստանալ 85 ցենտներ խաղողի բերք, խաղողի արտադրության և վաճառքի պլանը կատարել հոկտեմբերի 10-ին, պլանից դուրս տալ 3 հազար տոննա խաղող[35]։ Նրանք պատվով կատարեցին իրենց սոցպարտավորությունը։

ՀԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1953 թ.) պլենումը կուսկազմակերպությունների առջև խնդիր դրեց «կազմակերպել և օրեցօր ղեկավարել սոցմրցությունը, գյուղատնտեսության հետագա զարգացման խնդրի հաջող կատարման համար... լայնորեն տարածել և արտադրության մեջ արմատավորել գյուղատնտեսության առաջավորների փորձն ու նվաճումները... մրցություն ծավալել համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք նվաճելու համար»[36]։ ՀԿԿ Կենտկոմի որոշման լույսի ներքո կուսկազմակերպությունները զգալի աշխատանք կատարեցին։ Այսպես,

33 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 11, ց. 84, գ. 13, թ. 8։
34 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 130, ց. 5, գ. 338, թ. 22։
35 «Կուսակցական կյանք», 1952, № 6, էջ 4—5։
36 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 84, գ. 115, թ. 298։

1954 թ. ՀԿԿ Իջևանի շրջկոմի բյուրոն մասսայականացրեց Սարիգյուղի կոլտնտեսության օղակավարուհի Հ. Զարգարյանի աշխատանքի փորձը։ Նրա օղակը պլանավորված 15,3 ցենտներ ծխախոտի բերքի դիմաց ստացել էր 25 ցենտներ բերք, որի համար օղակի անդամները ստացել էին 44 հազ. ռ. պարգև[37]։ ՀԿԿ Գուգարքի շրջկոմի բյուրոն 1954 թ. հուլիսին, անդրադառնալով շրջանում սոցմրցության դրվածքի հարցին, տեղի կուսկազմակերպություններին հանձնարարեց «պարբերաբար ստուգման ենթարկել սոցմրցությամբ վերցրած պարտավորությունների կատարման ընթացքը, լայնորեն մասսայականացնել առաջավորների աշխատանքի փորձը, պատի թերթերում և իլլիշովկաներում լուսաբանել մրցությամբ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, գլխավորել կոլտնտեսականների և մեխանիզատորների արտադրական խանդավառությունը»[38]։

Սոցմրցության ծավալմանը նպատակաուղղված քաղաքական-մասսայական աշխատանքը տալիս էր իր արդյունքները։ Հանրապետության գյուղատնտեսության մի շարք ճյուղեր 1954 թ. գերակատարեցին պլանային առաջադրանքները. խաղողի մթերման պլանը կատարվեց 145,6, բանջարեղենինը՝ 105,8, կարտոֆիլինը՝ 101,5%-ով, կարևոր նվաճումներ ձեռք բերվեցին տնասնապահության բնագավառում[39]։

Նշանակալի էր Արարատի շրջանի Մխչյանի, Սևանի շրջանի Վարսերի, Շահումյանի շրջանի Ներքին Շենգավիթի, Եղեգնաձորի շրջանի Արենիի, Շամշադինի շրջանի Թովուղի կոլտնտեսությունների կուսկազմակերպությունների աշխատանքը, որոնք ամենօրյա ուշադրություն էին նվիրում սոցմրցության ծավալմանն ու առաջավոր փորձի տարածմանը։ Սոցմրցությամբ ձեռք բերած արդյունքներով Արարատի շրջանի Փարիզի Կոմունայի անվան, Շահումյանի շրջանի ՍՄԿԿ XVIII համագումարի անվան, Հոկտեմբերյանի շրջանի Լենինի անվան, Սպիտակի շրջանի Կիրովի անվան, Սևանի շրջանի Վարսերի կոլտնտեսությունները, Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանը, Լոռու տոհմաբուծական սովխոզի № 2 ֆերման 1954 թ. իրավունք ստացան մասնակցելու համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին։ Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման համար ծավալված պայքարում, օգտագործելով աշխատանքի առաջավոր փորձը և գյուղատնտեսական գիտության նվաճումները, մի շարք շրջանների աշխատավորներ բարձր ցուցանիշների հասան։ Այսպես, Կամոյի շրջանում հացահատիկի բերքը 1955 թ. ավելացավ 62, Վարդենիսի շրջանում՝ 79%-ով։ Այդ ուղղությամբ դրական էր նաև Սևանի, Մարտունու, Շամշադինի և Հրազդանի շրջանների աշխատավորների աշխատանքը[40]։ Ախուրյանի, Ստեփանավանի, Շահումյանի, Իջևանի, Աբովյանի, Արտաշատի, Թումանյանի և Շամշադինի շրջանների աշխատավորները 1955 թ. մեկ հեկտար ցանքատարածությունից ստացան 60—65 ցենտներ եգիպտացորենի հատիկ և 250—300 ցենտներ կանաչ մասսա[41]։

Գյուղի աշխատավորների շրջանում ծավալված գործարար սոցիալիստական մրցության շնորհիվ հանրապետությունը կատարեց անասնաբուծական մթերքների 5-ամյա պլանը, իսկ խաղողի մթերման պլանը 1955 թ. կատարվեց 123,7, կարտոֆիլինը՝ 117,3, բանջարեղենինը՝ 125,4, ծխախոտինը՝ 110%-ով։ Մեքենատրակտորային կայանները ևս կատարեցին պլանային ա-

---

37 Նույն տեղում, ց. 85, գ. 79, թ. 69—70։

38 Նույն տեղում, գ. 97, թ. 47։

39 Ս. Թովմասյան, Հաշվետու զեկուցում ՀԿԿ XVII համագումարին՝ ՀԿԿ Կենտկոմի աշխատանքների մասին, էջ 56։

40 Ս. Թովմասյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿԿ XVIII համագումարին, Երևան, 1956, էջ 38—39։

41 Նույն տեղում, էջ 39։

ռաջադարանքները[42]։ Հնգամյակի տարիներին հանրապետության գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունն աճեց 36%-ով, որի շնորհիվ կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը 819,5 մլն ռուբլուց հասան 1110 մլն ռուբլու, իսկ դրամական եկամուտները 427,1 մլն ռուբլուց՝ 629,6 մլն ռուբլու[43]։ Այդ տարիներին զգալիորեն ամրապնդվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, աճեց գյուղատնտեսական տնտեսությունների թիվը[44]։

Հայաստանի կոմկուսի XVIII համագումարը 1956 թ. ծավալուն միջոցառումներ մշակեց գյուղատնտեսության հետագա զարգացման, նրանում աշխատավորների սոցմրցությունը լիովին զարգացնելու ուղղությամբ։

Այսպիսով, 1950—1956 թթ. ՀԿԿ-ն արդյունաբերության, գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում կազմակերպեց և ղեկավարեց աշխատավորների սոցիալիստական մրցությունը, զարգացրեց ստեղծագործական նախաձեռնությունը, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժումը, որը վճռական նշանակություն ունեցավ ինչպես աշխատավորության կոմունիստական դաստիարակության, այնպես էլ հանրապետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում։

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ КП АРМЕНИИ ПО ОРГАНИЗАЦИИ СОЦИАЛИСТИЧЕСКОГО СОРЕВНОВАНИЯ (1950—1956)

ОВАНЕС КОЧИНЯН

Резюме

В 1950—1956 гг. Компартия Армении вела большую и плодотворную работу по организации социалистического соревнования во всех отраслях народного хозяйства.

Парторганизация республики способствовала развитию творческой инициативы масс, возглавила движение за коммунистическое отношение к труду. Социалистическое соревнование сыграло значительную роль в деле коммунистического воспитания трудящихся в выполнении социально-экономических задач.

---

42 Նույն տեղում, էջ 40։

43 «Советская Армения за 40 лет», с. 85.

44 «Народное хозяйство АрмССР», с. 55.